

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ

ՏԱՐԵԼԻՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հարգարժան Հայր Սուրբ

Հարգելի՛ ներկաներ

Յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին մեր ժողովուրդը միահամուռ կերպով ոգեկոչում է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Այս տարվա ապրիլը տարբերվում է իր նախորդներից, քանի որ լրանում է 20-րդ դարասկզբում մեր ազգի հանդեպ իրականացված մեծ ոճրի 100-րդ տարելիցը:

Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, <<Հիշում եմ և պահանջում...>> կարգախոսի ներքո, մենք կրկին բարձարցնում ենք մեր պահանջատիրական ձայնը:

Այո՛, մենք հիշում ենք ու պահանջելու ենք, նոր սերունդն այսօր բոլորովին նոր կերպով է ներգրավվել Հայոց Մեծ եղեռնի դատապարտման, միջազգային ճանաչման ու այդ ամենը քաղաքակիրթ աշխարհին լսելի դարձնելու գործընթացներում:

Պատահական չէ, որ այս օրերին ինչպես ողջ հայությունը, այնպես էլ միջազգային ամենատարբեր կառույցների ներկայացուցիչներ կազմակերպում են 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնին զոհ դարձած մեր անմեղ հայրենակիցների ոգեկոչմանը նվիրված բազմաթիվ միջոցառումներ:

Կոտայքի մարզում ևս մշակվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում նախատեսվող մարզային միջոցառումների ծրագիր, ձևավորվել է այդ միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողով:

Այս օրերին մենք մարզում ունեցանք բազմաթիվ կարևոր միջոցառումներ, համայնքներում տեղադրվեցին խաչքար-հուշակոթողներ, կազմակերպվեցին հոգևոր ու աշխարհիկ տարբեր նախաձեռնություններ:

Մարզային բոլոր միջոցառումների հիմքում դրվել են ՀՀ Նախագահ պարոն Սարգսյանի կողմից Ծիծառենակաբերդի հուշահամալիրում ներկայացված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի դրույթները:

Հարգարժան ներկաներ.

Այս օրերին բոլորս մեծ ոգևորությամբ ենք հետևում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում տեղի ունեցող իրադարձություններին:

Բոլորս հպարտացանք, երբ Վատիկանում Նորին Սրբություն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի կողմից Սուրբ Պետրոսի տաճարում մատուցվեց պատարագ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Այս օրերին շարունակվում է տարբեր պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որը ևս շատ կարևոր է:

Հարգարժան ներկաներ.

Եկեք մեր այս մարզային արարողության հիմքում դնենք ազգի վերածննդի գաղափարը և ցանկանանք, որ մեր նոր սերունդը այլևս տոնի միմիայն հաղթական հոբելյաններ ու կերտի նոր հաղթանակներ:

24.04.2015